

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ

«Մշակույթ» հասկացությունը ծագել է լատիներեն “culture” բառից, որը նշանակում է «զարգացման միտում»: Հասարակության և պատմության համատեքստում մշակույթ հասկացությունը առաջին անգամ կիրառվել է ֆրանսերեն, այնուհետև գերմաներեն տեքստերում՝ 1750-ականներին: Ֆրանսերենում այն կիրառվում էր մարդու բարոյականության զարգացման իմաստով, իսկ գերմաներեն տեքստերում օգտագործվում էր «քաղաքակրթություն» բառը՝ նկատի ունենալով սոցիալական, տեխնոլոգիական և գիտական զարգացում:

Ա. Քրոբերը և Կ. Քլաքհոնը գտնում էին, որ «քաղաքակրթություն» բառը վերածննդի ժամանակաշրջանում է առաջացել, հավանաբար ֆրանսերեն «civiliser» բառից, որը նշանակում է սերմանել կատարյալ վարվելաձև, քաղաքակրթել¹:

Օ. Շպենգլերը 1918 թվականին գրում է, որ մշակույթը և քաղաքակրթությունը մարդկային կյանքի կարևորագույն փուլեր են: Նրա բնորոշմամբ քաղաքակրթությունը մարդկային զարգացման վերջին փուլն է, որին հասնելով՝ հասարակությունը կկորցնի իր ոգին²:

Այս հարցի վերաբերյալ Մերտոնը ընդգծում է, որ մշակույթը և քաղաքակրթությունը վերլուծական աբստրակցիայի կամարներ են ձևավորում, որում կոնկրետ երևույթները կարող են երկու կողմ ունենալ, և որում ընդհանուր տարրերի միջև կարող է համագործակցություն առաջանալ: Մերտոնը նշում է, որ քաղաքակրթության զարգացման արագությունը չպետք է բացատրել իբրև անկախ փոփոխական, քանի որ քաղաքակրթական և մշակութային բնագավառների միջև փոխկապվածությունը կարող է կանխարգելիչ գործառույթ կատարել³: Ռ. Մերտոնը քաղաքակրթությունը ներկայացնում է տեխնոլոգիական կողմերով, իսկ մշակույթը՝ սիմվոլիկ-տրամաբանական:

Ս. Հանթինգթոնը աշխարհը ներկայացնում է իբրև փոքր և մեծ մշակույթների ամբողջություն, որում «ամենամեծերը» քաղաքակրթության կամարներն են ձևավորում⁴:

Եթե նախկինում մշակույթը դիտվում էր որպես ինքնուրույն պահպան-

¹ Տե՛ս **A. Kroeber, C. Kluckhohn**, Culture: A critical review of concepts and definitions, papers of the Peabody Museum of Archeology and Ethnology, Harvard University, Vol. 47 (1), 1952, էջ 145:

² Տե՛ս **O. Spengler**, The decline of the West, An Abridged Edition, Oxford University Press, 1991, էջ 24-27:

³ Տե՛ս **Merton, Robert K.** Civilization and Culture. *Sociology and Social Research* 21.2 (1936): 103 էջ 13:

⁴ Տե՛ս **Samuel P. Huntington**, The Class of Civilizations and the Remaking of World Order, Penguin Group, 1996, էջ 40-56:

ման միջոց, ապա է. Թիրյաքյանը մասնավորապես կարևորեց հասարակությունը զարգացման մղող մշակութային գործառույթը: Նա իմաստի սոցիալական կառուցակցունը սահմանում է իբրև մշակութային աշխատանք, իսկ գիտատեխնիկական նվաճումները՝ քաղաքակրթական աշխատանք: Ըստ նրա՝ քաղաքակրթությունը ձգտում է լոկալ միջավայրից անցնել համաշխարհային միջավայր: Այս գործընթացում հասարակությունները կարող են ձևավորվող համաշխարհային քաղաքակրթության մեջ տեղադրել լոկալ մշակույթ կամ լոկալ մշակույթը վերածել համաշխարհային քաղաքակրթության, ինչպես նաև հնարավոր է համաշխարհային քաղաքակրթությունը յուրացնել լոկալ մշակույթի կորստի հաշվին⁵:

Ջարգացող հասարակություններում մշակութային արժեքների դերի կարևորության հիմնահարցը՝ իբրև արդիականացման ուրույն ուղու ապահովման միջոց, արդիականացման տեսության շրջանակներում զարգացրել է է. Ա. Թիրյաքյանը: Նա առաջիններից էր, ով, ուսումնասիրելով 60-70-ական թվականների արդիականացման տեսության՝ գծային արդիականացման քննադատությունները, առաջ քաշեց նոր մոտեցումներ, ձևավորեց նոր մեթոդաբանություն, որն անվանեց նեոմոդեռնիզացիա: Թիրյաքյանը զարգացրեց բազմառճային արդիականացման գաղափարը, որում արդիականացման միակ հնարավոր ճանապարհն այլևս չէր դիտվում միայն արևմտյան հասարակությունների արժեքների ընդօրինակում, այլ կարևորվում էին արդիականացման ապահովման այլընտրանքային ճանապարհները: Նա մատնանշեց արդիականացման բազում ուղիներ, որոնցից հիմնականներն էին՝ «պատերազմ և արդիականացում», «գլոբալիզացիա և արդիականացում», «դեմոկրատիա և արդիականացում», ինչպես նաև «մշակույթ և արդիականացում»: Այս բոլորը միմյանց հետ փոխկապված են, և այս ամենի հիմքում ընկած են մշակութային արժեքները: Այսինքն՝ արդիականացման ապահովման հիմնական ճանապարհը «իրական» արժեքներ ունենալն է, որոնք հասարակությունը համախմբող, վարքը ղեկավարող և զարգացման մղող գործառույթներ են կատարում⁶:

Այդպիսի արժեքներ առկա են տարբեր հասարակություններում, վերջիններս կարող են ընտրել սեփական կամ այլ մշակութային արժեքների յուրացման ճանապարհը, սակայն ազգային ինքնության պահպանման համար անհրաժեշտ է զարգացնել կամ ստեղծել սեփական արժեքային համակարգ:

Է. Թիրյաքյանը գտնում է, որ յուրաքանչյուր հասարակություն կարող է և պետք է ընտրի զարգացման իր ուրույն ուղին և զարգանալով մաս կազմի համաշխարհային քաղաքակրթության:

Ըստ է. Թիրյաքյանի՝ միանգամայն հավանական է, որ 21-րդ դարում արդիականացման կենտրոն դառնա Արևելյան Ասիան: Ճապոնիան արդեն ցույց է տվել ուշագրավ գիտատեխնոլոգիական և տնտեսական աճ, Չինաստանը և Հարավային Կորեան վերածվել են բարձր և միջին խաղացողների: Չինաստանը և «Միացյալ» Կորեան (Հարավային և Հյուսիսային Կորիաների միավորման դեպքում) նույնպես կկարողանան բավականին ա-

⁵ Տե՛ս Said Arjomand, Edward A. Tiryakian, Rethinking civilizational Analysis, SAGE, 2004, էջ 30-48:

⁶ Տե՛ս նույն տեղը:

րագ անցում կատարել ժամանակակից սոցիալական և տեխնոլոգիական կարգերի, ուստի ճապոնիայի հետ միասին կձևավորեն պատմական և մշակութային հիմքեր ունեցող ժամանակակից նոր քաղաքակրթություն: Երեքն էլ օժտված են ռազմավարական բարձր միտումներով, էթնիկորեն համեմատաբար միատարր են (ուժեղ ազգային գիտակցությամբ, հավաքականությամբ և կողմնորոշմամբ), նրանց քաղաքացիներն աշխատասեր են և կարգապահ, սակայն բուրժուայական ավանդույթներով, որը համատեղելի չէ արդիականությանը, այդ թվում՝ գիտական ռացիոնալությանը: Այն, ինչ հարկավոր է Արևելյան Ասիային արդիականացման էպիկենտրոն դառնալու համար, հավատալիքների և արժեքների սոցիոմշակութային զարգացումն է, որոնք տարբեր ասպեկտներում նոր սոցիոմշակութային ունիվերսալիանների հիմք կդառնան, որպեսզի ընդհանուր արդիականությունն ապահովեն և համաշխարհային սոցիալական հանրության մոդել հանդիսանան⁷:

Ժամանակակից հասարակությունն «ամենօրյա գործունեությամբ» միտված է դեպի ապագան, որը առաջացնում է միասին լինելու և գործելու ցանկություն:

Մշակույթի «նյութականացումն» ազգային ինքնության հիմք է, որը պահպանվում է ազգային մշակույթի ինքնագիտակցության արտադրման և վերարտադրման բազում ձևերով և աստիճաններով, որոնցից են ընտանիքի ինստիտուտը, որի միջոցով ազգային լեզուն, երգերը, խաղերը և ավանդույթները փոխանցվում են սերնուղներին, հասարակությունը, որտեղ քաղաքացիական համակարգը գտնվում է մշակութային, կրթական և կրոնական ինստիտուտների պաշտպանության ներքո, և վերջապես՝ քաղաքական մակարդակը, որտեղ երբեմն շեղումներ են լինում, երբ մշակույթը փոփոխություններ է կրում՝ արտաքին ուժերի կողմից ճնշումներին դիմակայելու անզորության, իշխանության պահպանման կամ արդիականացման մոդելը ոչ ճիշտ ընտրելու պատճառով⁸:

Մշակույթի և քաղաքակրթության ոչ համարժեք զարգացումը հանգեցնում է արդիականացման ճգնաժամի: Արդիականացվող հասարակությունում տեղի ունեցող քաղաքակրթական փոփոխությունները հակասության մեջ են մտնում դարերի խորքից եկող մշակութային արժեքների հետ և մշակույթի համապատասխան «օգնությունը» չստանալու դեպքում հիմնականում կասեցվում են:

Քաղաքակրթությունն արագ զարգանալիս երբեմն առաջանում է մշակութային ճգնաժամ, քանի որ մշակույթը դադարում է համապատասխանել հասարակության մտավոր ներուժին: Մշակույթի և քաղաքակրթության ոչ համարժեք զարգացման պատճառն այն է, որ մշակույթի ոլորտն օժտված է ավելի մեծ իներցիայով, պահպանողականությամբ, բնութագրվում է փոփոխությունների առավել դանդաղ ընթացքով և երկար ժամանակ է պահպանում իր կառուցվածքը և հիմնարար արժեքները:

Ինչպես նշում է Մ. Դեմիրճյանը, «Ստատիկ վիճակում գտնվող ավանդական մշակույթը դժվար է ենթարկվում փոփոխությունների, հետևապես

⁷ Տե՛ս E. A. Tiryakian, The Global Crisis as an Interregnum of Modernity, International Journal of Comparative Sociology, XXV, 1-2, 1994, էջ 127-128:

⁸ Տե՛ս E. A. Tiryakian, The Wild Card of Modernity, The MIT Press, 1997, էջ 153-173:

նաև արդիականացման, քանի որ դարերի ընթացքում կայացած ավանդույթների, մտածելակերպի ու ապրելակերպի նորմերի ցանկացած փոփոխություն ընկալվում է որպես ինքնությանը սպառնացող վտանգ»⁹:

Այս անհամապատասխանելիության հետևանքով ավանդական մշակութային արժեքների և հասարակական կյանքի նոր, արդիական ձևերի միջև լարվածություն է առաջանում: «Ապագայի մարտահրավերներից այլևս որևէ ազգ պատսպարվելու տեղ չունի, նշանակում է բոլոր ազգերն էլ բառացիորեն դատապարտված են լինելու ժամանակակից: Յետևաբար, կյանքի կազմակերպման ու կանոնակարգման ազգային մշակույթները ևս պետք է արդիականացվեն»¹⁰:

Արդիականացումն այնպիսի նյութական հիմք է ստեղծում, որը հնարավորություն է ընձեռում զարգացնելու մշակույթը, բացահայտելու կամ պահպանելու մշակութային այն ձևերը, որոնք համարժեք են նոր իրավիճակին:

Մշակույթն ունակ է փոփոխությունների: Յուրաքանչյուր մշակույթ իր դրական և բացասական կողմերն ունի. մարդիկ կարող են սիրել, խղճալ, օգնել, համախմբվել, պայքարել չարիքների, արհավիրքների դեմ, և հակառակը՝ կարող են ստեղծել ինստիտուտներ, որոնց գործառության հետևանքով քանդվում են համակարգեր և խաթարվում արժեքներ: Մշակույթի առավելագույնս համահարթեցված լինելու դեպքում ձևավորվում է վստահության բարձր մակարդակ, և մարդիկ իրենց համարում են տվյալ հասարակական միջավայրի անբաժանելի մաս, որն ի զորու է համախմբելու մարդկանց, հասարակության ադիականացմանն ուղղված գործողությունների:

Հայ հասարակության արդիականացմանը խոչընդոտող մշակութային տարրերը

Չնայած այն հանգամանքին, որ շատերն արդիականացմանը խոչընդոտող հիմնական տարրերը համարում են տնտեսական և քաղաքական բնույթի, մի շարք հեղինակներ, որոնց թվում է նաև Է. Թիրյաքյանը, գտնում են, որ այդ տարրերը հիմնականում մշակութային բնույթի են, քանի որ մշակույթն առավել կայուն և փոփոխությունների նկատմամբ առավել պահպանողական է և կարող է նպաստել կամ խոչընդոտել այս կամ այն տնտեսական և քաղաքական փոփոխությանը¹¹:

Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալական խնդիրները հիմնականում հնարավոր է կարգավորել արդիականացման համար անհրաժեշտ սոցիոմշակութային արժեքների ձևավորման և զարգացման միջոցով:

Հայ հասարակությունում խաթարվել են ազգային արժեքների իրա-

⁹ Մ. Դեմիրճյան, Բարոյական ինքնության արդիականացումը որպես քաղաքական ազգի ձևավորման նախադրյալ, «Բանբեր Երևանի համալսարանի, Փիլիսոփայություն, Հոգեբանություն» 131.4, 2010 թ., էջ 5-12:

¹⁰ Տե՛ս Է. Հարությունյան, Հայկական շարունակականություն. գործառնության հուսալիության հիմնահարցը, «Բանբեր Երևանի համալսարանի», №1 (115), Եր., 2005, էջ 3:

¹¹ Տե՛ս S. Arjomand, E. Tiryakian, նշվ. աշխ.:

կան չափանիշները: Առօրյա վարքը, կենսակերպը այլևս չեն դիտվում իբրև ոչ նյութական մշակույթ: Մշակույթը միայն «բարձր» արժեքների հետ է ասոցացվում, այնքան «բարձր», որ առօրյայում այն գրեթե չենք օգտագործում, այն այնքան մեկուսացած է, որ մենք չգիտենք «վաղն» աշխատավայրում մեզ ինչպես դրսևորենք, ինչպես պետք է շփվել ղեկավարի, ուստիկանի, միմյանց հետ և այլն:

Ընտանիքի անդամներին տան պատերի ներսում հայիոյոլ տղան կարող է իր եղբոր, մոր կամ այլ ազգականի հասցեին բացասաբար արտահայտված անձնավորությանը դանակահարել, ուստիկանների կոռումպացված լինելուց բողոքող քաղաքացին օրենքը խախտելու և ուստիկանի «ձեռքն ընկնելու» դեպքում հաճախ փորձում է խնդիրը կարգավորել կաշառքով, երեխաների խաղահրապարակներում ավտոտնակ տեղադրողները խնջույքի ժամանակ խմում են երեխաների կենացը՝ նշելով, որ ինչ անում ենք, երեխաների համար ենք անում: Այս խեղաթյուրված ընկալումները խոչընդոտում են հասարակության զարգացումը:

Արդի հայ հասարակությունում փոքր է սոցիալական վստահության չափը: Վստահությունը կոլեկտիվ գործողությունների հիմք է ստեղծում: Սակայն այսօր այդ վստահության անբավարար մակարդակի պատճառով մարդիկ լքում են իրենց հայրենիքը: Վստահության բացակայության պայմաններում մարդիկ պատրաստ չեն միմյանց զիջելու, օգնելու, միմյանց հանդեպ դրական վերաբերմունք ու զգացումներ առաջացնող հարաբերություններ ձևավորելու, որոնք էլ անհնարին են դարձնում հասարակության արդիականացումը:

Ինչպես նշում է Զ. Բայադյանը, «այսօր Հայաստանում, ի տարբերություն խորհրդային վերջին շրջանի, մարդն ավելի օտարված է ազգային հարստությունից և պետության հետ իրեն նույնացնելու ավելի քիչ իրական պատճառներ ունի, և պատճառներից առաջինը բնավ էլ սպառողականության տարածումը չէ: Եվ հայրենիքի, «հայրենի հողի» հետ կապերն են այլևս թույլ, և բարձր հայրենասիրական պաթոսը՝ ոչ այնքան տեղին: Այս և այլ բաներ նոր շեշտված կարևորություն են հաղորդում գաղափարաբանական հռետորությանը և հատկապես դրա առօրեական ձևերին»¹²:

Մարդկանց մեծ մասը կապ չի տեսնում ընտանեկան և հասարակական բարեկեցության միջև: Այն, ինչ վերաբերում է իրենց, իրենց ընտանիքի բարեկեցությանը, այն, ինչ իրենց անմիջական վերահսկողության տակ է գտնվում, հասարակության բարեկեցությունից առաջնային է համարվում, ուստի հասարակության բարեկեցության ապահովման գործում պատասխանատու չեն զգում: Պետության, հասարակության մասին խոսելիս շատ հաճախ մեղադրանքներ են ներկայացնում ժողովրդին առանց հաշվի առնելու, որ իրենք նույնպես այդ ազգի մի մասն են: Ստացվում է, որ իրենք այդ սոցիումից դուրս են գործում և իրենք «ուրիշ» են: Ուստի չի ընդունվում անձի, խմբի բարեկեցությանը հասարակական բարեկեցության ապահովման միջոցով հասնելու գաղափարը, ինչն էլ խոչընդոտում է զարգացման գործընթացը:

¹² Զ. Բայադյան, Լուսանցագրություն. «Մենք», <http://hetq.am/arm/news/17499/lusan-cagrutyunmenq.html>, 20/02/2014

Արդի հայ հասարակության կարևորագույն խնդիրներից են ոչ միայն ազգային արժեքների իրական իմաստի պահպանումն ու նոր արժեքների ձևավորումը, այլև այդ արժեքները համաշխարհային քաղաքակրթության մաս դարձնելը:

Ինչպես նշում է Յ. Բայադյանը՝ «Տարիներ շարունակ տարբեր կողմերից լսում ենք այն մասին, թե մենք այնքան էլ լավ չենք կարողանում աշխարհին հասկանալի ձևով ներկայացնել «մեր մշակույթը»: Նկատենք, որ այստեղ նույնպես խոսքը մի մշակույթից մեկ ուրիշ մշակույթ կատարվող լավ կամ վատ թարգմանության մասին է: Բայց մեծ հաշվով այդ կարողությունն ուրիշ բան չէ, քան աշխարհին մատչելի ձևով ապրանքայնացնել այդ մշակույթը և կարողանալ վաճառել: Հայաստանում դեռ մնացել են չվաճառված բաներ»¹³:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ արդի հայկական մշակույթում առկա են.

I. Գաղափարախոսական ճգնաժամ, որի պատճառն ապագայի մոդելների արտադրության անբավարարությունն է:

II. Սոցիալ-հոգեբանական ճգնաժամ, որը պայմանավորված է հասարակության պասիվությամբ, անվստահությամբ, անտարբերությամբ և այլ խնդիրներով:

III. Արժեքների նշանակության և դերի ճգնաժամ, որի դեպքում արժեքի իրական իմաստը խեղաթյուրված է, ուստի հասարակության բարոյական վարքային մոդելների ձևավորման գործընթացը դանդաղում է:

IV. Ժամանակի անհամապատասխանության ճգնաժամ, ըստ որի՝ հասարակությունն իր կարծրատիպերով, ինչպես նաև զարգացման մակարդակով ետ է մնում համաշխարհային զարգացման տեմպերից:

V. Մշակույթը կրողների ճգնաժամ: Աշխատատեղերի և մասնագիտական հեռանկարի բացակայության պայմաններում նկատվում է հասարակության անդամների արտագաղթ, ուղեղների արտահոսք, հասարակության մտավոր սեփականության անարտադրողականություն:

Մեր կարծիքով, այս և որոշ այլ խնդիրների լուծման բանալին հնարավոր է գտնել է. Թիրյաքյանի հասարակության արդիականացմանը վերաբերող աշխատություններում:

Ըստ է. Թիրյաքյանի՝ համաշխարհային քաղաքակրթության մեջ տեղ գտնելու համար հասարակությանը հարկավոր է ունենալ միատարր մշակույթ, ինչպես նաև՝

- բարձր միտումներով ռազմավարական ընդհանրություններ,
- հստակ սահմանված գաղափարախոսություն,
- ուժեղ ազգային գիտակցություն և միասնականություն,
- աշխատասիրություն,
- կարգապահություն,
- կրոնական ավանդույթներ, որոնք կնպաստեն ուժեղ ազգային գիտակցության, միասնականության, կարգապահության և այլ արժեքների ձևավորմանն ու զարգացմանը,

¹³ Տե՛ս **Յ. Բայադյան**, Լուսանցագրություն. «Բարոյականություն և ոճ», <http://hetq.am/arm/news/21594/lusancagrutyun-baroyakanutyun-ev-otch.html>, 20/02/2014

• Նոր սոցիոմշակութային ունիվերսալիաներ, որոնք համաշխարհային սոցիալական հանրության մոդել կհանդիսանան:

Ներկա իրականությունը, ինչպես նշում է Ա. Մկրտիչյանը, բնութագրվում է միառճային մշակույթի գերակայությունից բազմառճայինի անցումով, որի դեպքում գոյանում և ձևավորվում են ավանդույթների, մշակութային ոճերի, կենսակերպի, փոխազդեցության առավել բարդ համակարգեր, որոնք հաճախ ներքուստ փոխկապված չեն: Այս ամենի հետևանքով մշակութային նոր ձևերի և ոճերի առաջացումը հաճախ ուղեկցվում է մշակույթի, հասարակության զարգացման, կյանքի և մարդկային գոյության որևէ ընդհանուր նպատակի բացառումով¹⁴:

Համաշխարհային քաղաքակրթությունում ուրույն տեղ զբաղեցնելու համար հատկանշական է միատարր մշակույթի առկայությունը, հակառակ դեպքում հասարակությունը ստիպված կլինի գլոբալիզացիայի պայմաններում յուրացնել օտար մշակույթներ, որի հետևանքով կձևավորվի բազմամշակութային հասարակություն, ինչն էլ կթուլացնի սեփական մշակույթի դիրքերը և կխոչընդոտի արդիականացման գործընթացը:

Սեփական ուղու ձևավորման հաջորդ պայմանը մշակութային հզոր ռեսուրսների առկայություն է, ուստի դրանք զարգացնելու և զտելու, արժեքները վերաիմաստավորելու խնդիր է առաջանում: Ինչպես նշում է Է. Թիրյաքյանը, իրական արժեքները բարոյականության զարգացման մղող գործառույթ են կատարում, և այս ցուցիչը իրական արժեքները կեղծ արժեքներից տարբերակելու հնարավորություն է ընձեռում¹⁵:

Արժեքների իրական իմաստը սերմանելու գործընթացը սկսվում է վաղ տարիքից: Երեխային պետք է կտրել համակարգչից և բակ ուղարկել՝ թիմային խաղեր խաղալու, որոնք կարող են նրան սովորեցնել թիմային համագործակցություն, զարգացնել մտավոր կարողությունները:

Դպրոցներում արժեքներ սերմանելու հստակ ծրագրի ստեղծմամբ և կիրառմամբ, դերային խաղերի և առիթաբարձր խաղերի ու դասավանդման միջոցով երեխաներին հնարավոր է սովորեցնել արժեքների իրական մշակությունը: Այս ամենը կնպաստի արժեքներին ավտոմատ, ինքնաբերաբար հետևելուն:

Հ. Բայադյանը նշում է «Բնակչության ազգայնացումը կատարվում է, ի թիվս այլ բաների, համընդհանուր դպրոցական կրթության, պարտադիր զինվորական ծառայության, աշխատուժի ազատ տեղաշարժի, միասնական ավանդույթների, տոների ու ծեսերի արմատացման եւ, իհարկե, հայրենասիրական գաղափարաբանության մշակման ու տարածման միջոցով: Ուրեմն, խոսքը հայրենասիրության՝ որպես գաղափարաբանության մասին է: Այսօր տարբեր առիթներով հնչող պնդումը, թե դպրոցը պետք է պատրաստի «հայրենասեր քաղաքացիներ», հենց այդ է ասում»¹⁶:

Իրական արժեքները պահպանելու և սերմանելու գործընթացը գոր-

¹⁴ Տե՛ս Ա. Մկրտիչյան, Ավանդականի և արդիականի համեմատական հետազոտության մեթոդաբանության հարցեր, «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ», հոդվածների ժողովածու, Եր. 2006, էջ 253:

¹⁵ Տե՛ս S. Arjomand, E. Tiryakian, նշվ. աշխ., էջ 30-48

¹⁶ Հ. Բայադյան, Լուսանցագրություն. «Հայրենասիրության մասին», <http://hetq.am/arm/news/17250/lusancagrutyun-hayrenasirutyan-masin.html>, 20/02/2014

ծող ինստիտուտների գործառույթներից մեկն է:

Այս ամենը ապահովելու և ժամանակակից աշխարհում մրցունակ լինելու համար հարկավոր է.

- նախ և առաջ հասկանալ, թե համաշխարհային քաղաքակրթությունում որտեղ կարող ենք տեղ զբաղեցնել, այնուհետև մշակել այդ միջավայրը զբաղեցնելու ռազմավարական ծրագիր և ձևավորել հստակ գաղափարախոսություն, որպեսզի հասարակության անդամները հստակ պատկերացնեն զարգացման ուղղությունը: Ապագայի հանդեպ պատկերացումների առկայությունն ու հավատը ի զորու են համախմբել մարդկանց մի գործողության շուրջ:

Արժեքների իրական նշանակությունը յուրացնելու հիմնական ճանապարհը հայրենասիրության սերմանումն է: Ինչպես նշում է Յ. Բայադյանը, «այն գաղափարաբանություն է՝ թերևս անհրաժեշտ ցանկացած ժողովրդի, յուրաքանչյուր ազգ-պետության համար: Այն կարող է մարդու մեջ սերմանել պատկանելության և պատասխանատվության կարևոր զգացումները, օգնել հանրությանը հասնելու այդքան բաղձալի միասնականության ու համերաշխության: Բայց մյուս կողմից՝ այն անխուսափելիորեն կառուցվում է ներքին տարբերակման եւ խտրականության զանազան ձևերի, հասարակության հիերարխիական կառուցվածքի և հաճախ այլատյացության վրա և ամենագռեհիկ ձևերով ծառայեցվում օրվա իշխանության շահերին»¹⁷:

- Անհատական, խմբային ինքնությունից անցում կատարել հասարակական ինքնության, որտեղ անձնական բարեկեցության հասնելու միակ ճանապարհը հասարակական բարեկեցության ապահովումն է, իսկ բարեկեցության ապահովման հիմնականը աշխատասիրությունն է:

- Ջարգացնել կրոնի ինստիտուտը, որը դարեր շարունակ հայապահպան գործառույթ է կատարել, սերունդներին է փոխանցել հայկական մշակութային արժեքներ, կարգապահություն է սերմանել, մարդկանց է համախմբել և այլն:

- Մշակութային նոր նմուշներ ստեղծել՝ սկսած մեր ընտանիքներից մինչև բիզնես ընկերություններ, պետական մարմիններ, բուհեր և այլն:

- Առօրյա գործողությունները դիտել որպես մշակութային նմուշների ձևավորման գործընթաց. սա է հասարակության արդիականացման ճանապարհը:

Այսպիսով, համաշխարհային քաղաքակրթությունում տեղ զբաղեցնելու համար հայ հասարակությանն անհրաժեշտ է ապահովել այդ ամենը: Այդ դրույթների որոշ մասը պատմական զարգացման ընթացքում արդեն իսկ ձևավորվել, հաստատվել և իրենց տեղն ու դերն են գտել հայ հասարակության պահպանման և զարգացման գործում, սակայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո որոշ արժեքներ կորցրին իրենց իրական նշանակությունը, առաջացան «կեղծ» արժեքներ, որոնք ձևավորեցին նոր մշակույթ, որն ի զորու չէ համախմբելու մարդկանց: Այս խնդիրների կարգավորման համար Թիրյաքյանն առաջարկում է ձևավորել մշակութային միատարր արժեքներ: Այդ ամենի համար անհրաժեշտ է կեղծ արժեքները տարանջատել ի-

¹⁷ Տե՛ս նույն տեղը:

րականից, ձևավորել բարձր միտումներով այնպիսի ռազմավարական ծրագիր և գաղափարախոսություն, որը կդառնա ապագայի տեսլական, կխթանի հասարակության զարգացումը:

Բանալի բառեր – *Արդիականացում, զարգացում, մշակութային ճգնաժամ, համաշխարհային քաղաքակրթություն, ազգային արժեքներ, ինքնություն, Է. Թիրյաքյան, հայ հասարակություն*

АЙК ГАЛСТЯН – *Культура в контексте модернизации общества.* – Постепенное разрушение тоталитарного режима привело к индивидуализации членов армянского общества. В результате образовались ложные ценности, а люди стали придавать личному благосостоянию большее значения, нежели всеобщей модернизации. Ключ к урегулированию этого противоречия содержится в работах американского социолога Э. А. Тиракьяна, посвящённых основным направлениям модернизации общества, одно из которых заключается в фомировании и развитии однородных культурных ценностей.

Ключевые слова: *модернизация, развитие, кризис культуры, мировая цивилизация, национальные ценности, идентичность, Э. Тиракьян, армянское общество*

HAYK GALSTYAN – *The Culture in the Context of Moderniziton of Society.* – The piecemeal collapse of totalitarian systems led to the individualization of the Armenian society. As a result false values came into being, and the members of the society started to attach importance to their own welfare instead of the modernization of the society.

Thus we think that the key to the solution of this problem can be found in American-Armenian sociologist E. A. Terekian’s works on modernization, where one of the ways of modernization of the society is considered the formation and the development of homogeneous cultural values.

Key words – *modernization, development, cultural crisis, world civilization, national values, identity, E. Tiryakyan, Armenian society*